


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ  
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և  
բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2004թ. հունվար-հոկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %	2003թ. հունվար-հոկտեմբեր	2004թ. հունվար-հոկտեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	810488.3	110.2	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	623928.5	108.8	76.9	77.0
բնակչությանը մատուցված ծառայություններ	186559.8	116.6	23.1	23.0

**Սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները  
(ընդհանուրի նկատմամբ %)**



2004թ. հունվար-հոկտեմբերին զրանցվել է սպառողական շուկայի ծավալի 10.2% աճ՝ 2003թ. հունվար-հոկտեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.1 տոկոսային կետով աճել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

**Մանրածախ առևտուր**


2004թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 623928.5 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.8%-ով: 2004թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 99.2%:

**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2004թ. հունվար-հոկտեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	623928.5	100.0
<i>այդ թվում</i>		
խանութներ	351883.1	56.4
հանրային սնունդ	7200.7	1.2
սպառողական ապրանքների շուկաներ	200789.7	32.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	19003.3	3.0
կրպակներ	45051.7	7.2

**Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվար-հոկտեմբերին**

(ընդհանուրի նկատմամբ % )



2004թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 88.6% (552672.8 մլն. դրամ):


ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվար-հոկտեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 200789.7 մլն. դրամ:

**Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-հոկտեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	186101.5	7.9	92.1
Արագածոտն	142.6	-	100.0
Արարատ	910.9	1.6	98.4
Արմավիր	2634.4	22.9	77.1
Գեղարքունիք	1331.8	23.8	76.2
Լոռի	4451.2	57.4	42.6
Կոտայք	2167.9	17.3	82.7
Շիրակ	1201.0	6.0	94.0
Սյունիք	414.5	-	100.0
Վայոց ձոր	109.6	-	100.0
Տավուշ	1324.3	29.7	70.3
Ընդամենը	200789.7	9.5	90.5

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2004թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 90.5%:

**Սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության  
ծավալն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի (ամփոփ)  
( ընդհանուրի նկատմամբ % )**



2004թ. հունվար-հոկտեմբերին 2003թ. հունվար-հոկտեմբերի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.0 տոկոսային կետով:

2004թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 58250.8 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 65 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-հոկտեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.0% կամ 19003.3<sup>1</sup> մլն. դրամը:

<sup>1</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

**Բնակչությանը մատուցված ծառայություններ**


2004թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 186559.8 մլն.դրամ, որը 2003թ. հունվար-հոկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 16.6%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 3706.2 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 42.0%-ով:

2004թ. հունվար-հոկտեմբերին 2003թ. հունվար-հոկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.6% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (1.2%), մարդատար տրանսպորտի (2.0%), փոստային և հեռահաղորդակցության (1.2%), մշակույթի (30.6%), զբոսաշրջության և էքսկուրսային (2.7%), առողջարանների և հանգստյան տների (2.8%), բնակարանային-կոմունալ տնտեսության (2.4%) ծառայությունների սակագների հավելաճով: Կրթության, բժշկական և կենցաղային ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 0.8, 0.7 և 1.6%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը  
2004թ. հունվար-հոկտեմբերին**

*(ընդամենի նկատմամբ %)*



2004թ. հունվար-հոկտեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (55705.7մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (46298.6մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 29.9 և 24.8 %:

2004թ. հունվար-հոկտեմբերին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 2464.5մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 1.3%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 301.7 մլն. դրամ: